

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

#### 1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Թվականից գործում է հարկային արտոնություն /ՀՀ հարկային օրենսգիրք 64-րդ հոդված/, համաձայն որի՝ մինչև 2026 թվականի հունվարի 1-ը ավելացված արժեքի հարկից ազատվում են ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000 և 8711 60 ծածկագրերին դասվող տրանսպորտային միջոցների ներմուծումը և (կամ) օտարումը (էլեկտրական շարժիչով մեծ, միջին և փոքր ավտոբուսներ, մարդատար տրանսպորտային միջոցներ, մոտոցիկլետներ և մոպեդներ):

Մաքսային միության հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 27-ի «Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսասակագնային կարգավորման մասին» N130 որոշման 7-րդ կետի 7.1.38-րդ ենթակետով սահմանվել են՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8703 80 000 2 ծածկագրին դասվող էլեկտրաշարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների /ըստ ԵԱՏՄ անդամ երկրների/ երրորդ երկրներից ներմուծման մասով սակագնային արտոնության /քվոտա/ չափաքանակները, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության համար էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ներմուծման մաքսատուրքից ազատման արտոնությունը տրամադրվում է 2024թ. և 2025թ. համար տարեկան հատ քվոտայով:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան համայնքում 2025 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» N 267-Ն որոշման համաձայն՝ որպես վառելիք էլեկտրաէներգիա օգտագործող և բացառապես էլեկտրական շարժիչով աշխատող ավտոտրանսպորտային միջոցի (էլեկտրամոբիլ) սեփականատեր կամ այլ օրինական

տիրապետող հանդիսացող և այն ղեկավարող անձանց համար 2025 թվականի՝ մեկ տարվա համար (մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ) սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ ազատելով Երևան քաղաքի «Ա» և «Բ» գոտիների համար հաշվարկված ավտոկայանատեղի տեղական վճարի վճարումից:

Վերոնշյալ իրավական կարգավորումների արդյունքում՝ հանրապետությունում ստեղծվել է առավել բարենպաստ միջավայր նշյալ էլեկտրական շարժիչով աշխատող տրանսպորտային միջոցների ներմուծումը խթանելու համար:

### **Ըստ վիճակագրական տվյալների՝**

Բարեփոխումների արդյունքում, 2017-2024թ. և 2025թ. հունիս ժամանակահատվածում ՀՀ տարածք ներմուծված՝ էլեկտրաշարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների դինամիկան ունի հետևյալ տեսքը:

| ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ<br>ծածկագիր                      | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024  | 2025<br>հունիս | Ընդամենը |
|----------------------------------------------|------|------|------|------|------|------|------|-------|----------------|----------|
| և ավելի ուղևոր)                              | X    | X    | 0    | 40   | 0    | 0    | 15   | 24    | 1              | 80       |
| մինչև 10 ուղևոր)                             | 29   | 12   | 145  | 315  | 1893 | 2663 | 6631 | 9527  | 14807          | 21215    |
| 8711 60 (մոպեդ,<br>մոտոցիկլ,<br>հեծանիվ ...) | X    | X    | 523  | 1797 | 4747 | 2823 | 2989 |       | 2149           | 15121    |
| Ընդամենը                                     |      |      |      |      |      | 5486 | 9635 | 11793 | 16957          | 36416    |

Ճանապարհային ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2025թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ հաշվառված էլեկտրաշարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների մասով ունենք հետևյալ ցուցանիշները.

թեթև մարդատար- 23918

ավտոբուս- 7

մոպեդ / մոտոցիկլետ -26

Հարկ է նշել, որ 2021-2024 թվականների ընթացքում /2024թ. ապրիլի 1-ի դրությամբ/ տեղադրվել և ներկայումս հանրապետության տարածքում կիրառվում են 317 լիցքավորման կայաններ, որոնցից 177-ը Երևանում: Նշենք, որ ՀՀ տարածքում գործող լիցքավորման կայանների տեղակայման վերաբերյալ տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ [plugshare.com](http://plugshare.com) կայքում հասանելի քարտեզի միջոցով:

Էլեկտրական շարժիչով աշխատող տրանսպորտային միջոցների ձեռքբերումն ու շահագործման խթանումը համահունչ է կանաչ տնտեսության նպատակների հետ: Նկատվում է քաղաքներում ածխաթթու գազի արտանետումների զգալի կրճատում և քաղաքային աղտոտվածության մակարդակի նվազում:

Վերոնշյալ դրական արդյունքներն ամրապնդելու և էլեկտրական տրանսպորտային միջոցների օգտագործման հետագա զարգացումն ապահովելու նպատակով նպատակահարմար է փոփոխություն իրականացնել ԱԱՀ մասով արտոնություն սահմանող ազգային օրենսդրական իրավական ակտում, համաձայն որի՝ 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ավելացված արժեքի հարկից կազատվեն՝ 2023թ-ի դեկտեմբերի 31-ից հետո թողարկված ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000 և 8711 60 ծածկագրերին դասվող՝ էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների (այդ թվում՝ ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող) «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպումը կամ ֆիզիկական անձանց կողմից որպես անձնական օգտագործման տրանսպորտային միջոց ներմուծումը և ազատ շրջանառության նպատակով բացթողնումը կամ ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծումը կամ ՀՀ տարածքում օտարումը:

## **2. Առաջարկվող կարգավորման բնույթը**

Նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (ՀՕ-165) 64-րդ հոդվածով սահմանված ավելացված արժեքի հարկի արտոնությունը երկարաձգել մեկ տարով՝ 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը՝

- 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000 և 8711 60 ծածկագրերին դասվող և 2023թ-ի դեկտեմբերի 31-ից հետո թողարկված՝ էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների (այդ թվում՝ ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող) «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպումը կամ ֆիզիկական անձանց կողմից որպես անձնական օգտագործման տրանսպորտային միջոց ներմուծումը և ազատ շրջանառության նպատակով բացթողնումը կամ ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծումը կամ ՀՀ տարածքում օտարումը:

### **3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները**

Նախագիծը մշակվել է Էկոնոմիկայի նախարարության կողմից:

### **4. Ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունմամբ նպաստավոր պայմաններ կստեղծվեն երկրում էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ձեռքբերումն ու շահագործումը խթանելու, արդեն իսկ արձանագրված դրական արդյունքների շարունակականության ապահովման, մթնոլորտային օդի աղտոտվածության նվազեցման համար: Հարկ է նաև նշել, որ էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների քանակի ավելացումն ուղղակիորեն կխթանի հանրապետությունում գիշերային ժամերին էլեկտրաէներգիայի սպառումը, քանի որ վերջիններիս լիցքավորումը մեծամասամբ իրականացվում է գիշերային ժամերին:

Միաժամանակ էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների քանակի աճը կնպաստի նաև դրանց շահագործման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների (լիցքավորման կայաններ, վերանորոգման կետեր և այլն) գյուղատնտեսության ու էկոլոգոսաշրջության զարգացմանը՝ լրացուցիչ ներդրումների (միջազգային և մասնավոր հատվածի կողմից) և նոր աշխատատեղերի ստեղծման միջոցով:

### **5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ**

Հայաստանի Հանրապետության վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ

ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N1363-Ն որոշմամբ հաստատված կառավարության ծրագրի 4.10-րդ կետով, որպես շրջակա միջավայրի կառավարման առաջնահերթ ուղղություններ ամրագրված են մթնոլորտային օդի պահպանության քաղաքականության մշակումը՝ ուղղված արտանետումների նվազեցմանն ու սահմանափակմանը, ինչպես նաև կանաչ տնտեսության և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի խթանմանն ուղղված քաղաքականության մշակումն ու իրականացումը:

ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշման 1-ին հավելվածով հաստատված «8.3 Էլեկտրամոբիլների և էլեկտրական շարժիչներով աշխատող տրանսպորտային միջոցների և հարակից ենթակառուցվածքների ներդրման ծրագրի իրականացում» միջոցառումը, որի կատարման շրջանակում, որպես ոլորտը խթանող գործողություն նախատեսվում է արտոնությունների ուսումնասիրություն և ըստ անհրաժեշտության՝ համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակում:

Նախագծի ընդունումն ուղղակիորեն բխում է Կառավարության կողմից 2021թ. ապրիլի 22-ին ընդունված «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների Ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին» որոշմամբ ամրագրված՝ մինչև 2030թ. ջերմոցային գազերի արտանետումները 1990թ. արտանետումների մակարդակի համեմատ 40 տոկոսով նվազեցնելու մասին ՀՀ պարտավորության իրականացման ապահովման անհրաժեշտությունից, հաշվի առնելով, որ շարժական աղբյուրներից մթնոլորտային օդի աղտոտումը ունի կարևոր դերակատարում՝ մասնավորապես արտանետվող ջերմոցային գազերի հանրագումարում:

**. Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության վերաբերյալ**

Նախագծի ընդունմամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման անհրաժեշտություն առկա չէ:

**. Պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունների վերաբերյալ**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021-2025 թթ. գործող Օրենսգրքի շրջանակներում ԱԱՀ-ի և նշված ապրանքատեսակների ներմուծումից ԱԱՀ չի գանձվել և ՀՀ պետական բյուջե գումար չի մուտքագրվել, ուստի պետական եկամուտներում հնարավոր կորուստներ չեն նախատեսվում: